



ԵՄ աջակցություն հանուն Հայաստանի զարգացման՝ միգրանտների ներուժի հզորացման միջոցով. ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆ-Հայաստան

Իրականացման 01.09.2020 - 01.09.2024
ժամանակահատված:

Այլ երկրներ:

Armenia

Ընդհանուր € 3 500 000
բյուջե:

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Iris business incubator



Սոցիալական ցանցերում օգտահաշիվների

հղումներ:
facebook.com/EU4IMPACT, facebook.com/ICMPDinArmenia,

Նախագծի

կայքէջ:

Նախագծի

վարչապատճեն

Ծրագրի նպատակն է դեպի ՀՀ ուղղվող դրամական փոխանցումները մոբիլիզացնելու միջոցով նպաստել աշխատանքային միգրանտների, վերադարձողների և նրանց ընտանիքների անդամների բարեկեցությանը և գործնական ներուժի հզորացմանը համայնքային զարգացման ու աշխատատեղերի ստեղծման նպատակով:

Իրականացումը ապահովվելու է հետևյալ գործողությունների միջոցով՝

-Միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրազեկվածության բարձրացում ներդրումային հնարավորությունների մասին և վստահության ամրապնդում պետության և Սփյուռքի միջև;

-Միգրանտների կողմից կատարվող ներդրումների ծավալների ընդլայնում և որպես արդյունք՝ գործարար նախաձեռնությունների և աշխատատեղերի թվի աճ;

-Սփյուռքի և աշխատանքային միգրանտների կողմից ներդրումներ կատարելու համար բազմաբնույթ և նորարար մեխանիզմների մշակում, որի հիման վրա հետագայում կձևավորվի ներդրումային համալսարան հայաստանյան բանկերի և ֆինանսական ինստիտուտների համար:

Ակնկալվող արդյունքներ:

Գործնական առումով ծրագրի շնորհիվ պետական կառավարման մարմինների շրջանում կամրապնդվի Հայաստանի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման գործում միգրանտների (այդ թվում՝ աշխատանքային) կարևոր դերի գիտակցումը: Կթարմացվի Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի (ՆՁԱԿ) ուսուցման մեթոդաբանությունը, ինչից մեծ օգուտներ կքաղեն հարյուրավոր շահառուներ: Սոցիալ-տնտեսական առումով ծրագիրն ուղղակիորեն կաջակցի հարյուր հիսուն շահառուների՝ նախաձեռնելու սեփական բիզնեսը համապատասխան դրամաշնորհների և վարկերի օգնությամբ: Հաշվի առնելով այդ շահառուների ընտանիքների անդամներին և հավանական մատակարարներին՝ անուղղակի աջակցություն կստանան հարյուրավոր քաղաքացիներ:

Ռազմավարական առումով ծրագիրը կնպաստի ՓՄՁ զարգացմանն ուղղված քաղաքականությունների կատարելագործմանն ու հզորացմանը՝ հատկապես խոցելի խմբերի համար, ինչպես նաև միգրացիայի և զարգացման մասով: